Տեղեկատվական թերթիկ

Բազմալեզվությունն ընտանիքում

Ձեր երեխան բազմալեզու՞ է մեծանում: Շնորհավորում եմ. Դրանով Դուք նրան հատուկ հնարավորություններ եք ընձեռում: Որպես կանոն, բազմալեզու միջավայրում երեխաները կարողանում են առանց մեծ ճիգ գործադրելու այլ լեզու սովորել: Դուք կարող եք աջակցել ձեր երեխային այդ հարցում:

Բազմալեզվությունն ընտանիքում

ARMENISCH

Ի՞նչ լեզվով պետք է խոսել տանը: - Ծնողների մայրենի լեզուներով:

Մեծ մասամբ լավ է, երբ մայրն ու հայրը կամ ընտանիքի մյուս անդամները երեխայի հետ այն լեզվով են խոսում, որով իրենք իրենց առավել վստահ ու հանգիստ են զգում: Դա սովորաբար իրենց սեփական մայրենի լեզուն է լինում: Ձեր երեխային Ձեր օրինակն է պետք որպես Ձեր մայրենի լեզուն տիրապետողի, որպեսզի նա կարողանա այն վստահորեն յուրացնել: Միաժամանակ դրանով բարենպաստ նախադրյալներ են ստեղծվում այլ լեզուներ սովորելու համար:

Կանոնավոր կերպով մանկապարտեզ հաճախելն օգնում է գերմաներեն սովորել:

Մի անհանգստացեք, եթե ձեր երեխան մանկապարտեզ ընդունվելու պահին դեռ չի տիրապետում գերմաներենին: Շարունակեք խոսել ձեր երեխայի հետ Ձեր մայրենի լեզվով: Նա կարող է սովորել գերմաներեն՝ շփվելով հաստատության մանկավարժների և մյուս երեխաների հետ:

Որպեսզի դա հաջողվի, շատ կարևոր է, որ ձեր երեխան կանոնավոր կերպով հաճախի մանկապարտեզ: Որքան հաճախ ձեր երեխան գերմանախոս երեխաների հետ խաղա մանկապարտեզում, խաղահրապարակում կամ մարզադաշտում, այնքան ավելի արագ ու բնականոն ճանապարհով կսովորի գերմաներենը:)

Երեխաները շփոթում ու խառնում են իրենց լեզուները:

Բնական է, որ երեխաները նոր լեզու սովորելիս սկզբում որոշակի սխալներ են թույլ տալիս: Այս սխալները հաճախ ցույց են տալիս, որ երեխաները ճիշտ ուղու վրա են դեպի գերմաներենը: Օրինակ նրանք գերմաներենում բաց են թողնում հոդերը («Gib mir Blatt»՝ «Gib mir das Blatt» ասելու փոխարեն) կամ սխալներ թույլ տալիս նախդիրներ գործածելիս («bei Baum»՝ «auf dem Baum» ասելու փոխարեն): Բազմալեզու երեխաները հաճախ մի որոշ ժամանակ շփոթում են իրենց երկու լեզուները, օրինակ, «Սա իմ Ball-ն է», որը խոսում է լեզվի յուրացման ավելի բարձր աստիճանի մասին: Եթե վստահ չեք կամ հարցեր ունեք, կարող եք օգնություն և խորհուրդ ստանալ մանկապարտեզի դաստիարակներից կամ ձեր մանկաբույժից:

Իմ երեխան հանկարծ միայն գերմաներեն է:

Որոշ ընտանիքներ հայտնում են, որ երբեմն երեխաները միայն գերմաներեն են խոսում և հրաժարվում օգտագործել ընտանիքի լեզուն: Կարիք չկա անհանգստանալու: Հետևողականորեն շարունակեք խոսել Ձեր լեզվով Ձեր երեխայի հետ: Որպես ունկնդիր Ձեր երեխան նույնպես կարող է հմտանալ Ձեր լեզվում և, անշուշտ, հետագայում նորից խոսել այդ լեզվով:

Խոսելն հաճույք է պատճառում:

Շատ և հաճախ խոսեք ձեր երեխայի հետ նրա ապրումների մասին: Պատմեք նրան պատմություններ, կարդացեք գրքեր կամ միասին խաղացեք: Անկախ նրանից, թե լեզվական ուշադրության որ ձևն եք ընտրում, դուք հնարավորություն եք տալիս ձեր երեխային կապել դրական զգացմունքները, ապրումները և փորձառությունները իր մայրենի լեզվի հետ և այդպիսով նպաստում եք նրա լեզվական ունակությունների զարգացմանը:

Բազմաթիվ լեզուներով մեծանալը լավ շանս է:

Դուք կարող եք աջակցել ձեր երեխայի բազմալեզու լեզվի յուրացմանը՝ հնարավորություն տալով նրան իր լեզուները տարբեր պարագաներում հնարավորինս հաճախ լսել և օգտագործել: Ձեր մայրենի լեզուն և մշակույթը, սակայն նաև շրջապատի խոսակցական լեզուն՝ գերմաներենը, պետք է կարևորվեն Ձեր երեխայի կողմից: Ձեր երեխայի արժևորող վերաբերմունքը բոլոր լեզուների նկատմամբ կարևոր նախապայման է, որը կդրդի Ձեր երեխային օգտագործել իր լեզուն և ընդլայնել իր լեզվական հմտությունները ձեր ընտանիքի լեզուներով և գերմաներեն նոր լեզվով: Այսպիսով Դուք կարող եք Ձեր երեխային լավ նախապատրաստել մանկապարտեզին և դպրոցին:

LakoS
Landeskompetenzzentrum zur Sprachförderung an Kindertageseinrichtungen in Sachsen

Weitere Informationen finden Sie unter:
www.lakos-sachsen.de

Diese Maßnahme wird mitfinanziert durch Steuermittel auf der Grundlage des vom Sächsischen Landtag beschlossenen Haushaltes.

SACHSEN